նի և բոլորակ եկեղեցու շինության վերաբերող արձանագրությունից։ Հավանաբար այդ թվականին կամ մի քիչ ուշ նա մեռել է խոր ծերության հասակում։ Եթե նա 1037 թվականին մեծ հռետորի, ուսուցչի համբավ ուներ և իբրև հեղինակավոր վանական կաթողիկոս դարձրին, այդ ժամանակ նա պետք է լիներ մոտ 50 տարեկան, իսկ 1063 թվականին նա կլիներ 80—85 տարեկան։ Այս հաշվով, նա ծնված պետք է լիներ 10-րդ դարի 80-ական թվականներին։

* * *

Սանահնի «Քոթուկի» մեջ պահպանվել է մի դեպքի նկարագիր, որ քաղված է Սարկավագի կորած պատմությունից։ Հայոց 559 թվականի (=1110) օգոստոս ամսի 13-ին, շաբաթ օրվա առավոտյան, երբ բոլորը հավաքված են եղել Սանահնի եկեղեցում, որոնց հետ նաև Կյուրիկեի որդի Դավիթ թագավորը, Աստվածածնի վերափոխման նախատոնակին նվիրված եկեղեցական արարողության ներկա լինելու, հանկարծ վանքը շրջապատում են սելջուկյան զինվորները, և բոլորը կարծում են, որ փրկության ոչ մի հնար չկա։ Սակայն, սպասածին հակառակ ամեն ինչ խաղաղությամբ է վերջանում, միայն թե մի քանի վանականների բռնում են և երկուսին էլ սպանում[1]։

1178 թվականին, երբ Սանահնի առաջնորդը Հովհաննես վարդապետն էր, Գրիգոր Տուտեորդին մի այգի է տնկել և խաչքար կանգնեցրել իր և վանքի առաջնորդ հայր Հովհաննեսի հիշատակին։

Հովհաննեսի առաջնորդության օրով է, որ 1181 թվականին կառուցվեց Ամենափրկիչ եկեղեցու ժամատունը կամ ներքին գավիթը սքանչելի ճարտարապետությամբ, որի շինարարության նվիրված ընդարձակ արձանագրությունը պահպանվել է նույն ժամատան մուտքի կամարաձևության վրա (արձ. 12)։ Այդ հոյակապ դահլիճը կառուցվել է, ինչպես տեղեկանում ենք արձանագրությունից, Քուրդ ամիրայի և Տուտեորդի Գրիգոր մեծ վարդապետ Խաչենցու օժանդակությամբ։ Ամիրա Քուրդը Զաքարյանների կողմից նշանակված գործակատար իշխանն էր։

Հավանաբար, այս միջոցին ամիրսպասալար Սարգիսը և նրա որդիները՝ Զաքարեն և Իվանեն, Սանահնում արդեն կառուցել էին իրենց տոհմական տապանատան արևելյան հին՝ կրկնահարկ մասը։ Այդ բանն ավելի հավանական է դառնում նրանով, որ այդ ժամանակ եկեղեցական կալվածքները Զաքարյաններն ազատել են ամեն տեսակ հարկերից։

Սանահնի նշանավոր առաջնորդներից մեկը եղել է Գրիգոր վարդապետ Տուտեորդին, որ հայտնի է նաև մատենագրական տվյալներից։ Նրան հիշատակում է Կիրակոս Գանձակեցին նախ՝ Դիոսկորոսի ոսկորները Անի փոխադրելու կապակցությամբ, իբրև Սանահնի առաջնորդ և ապա՝ երևելի վարդապետների շարքում։ Գանձակեցին Գրիգոր Տուտեորդու որևէ գրական գործը չի նշում, բայց անվանում է այր երևելի։

Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում պահվող մի ձեռագրի մեջ Գրիգոր Տուտեորդին ունի իր ձեռքով գրած մի հիշատակագրություն, որը հետևյալ բովանդակությունն ունի.

«Ես Գրիգոր նուաստ ի մակս քանակութեանց ուսումնական արտադրութեանց, յաղաւ տանէ, ստացա զմարգարիտս հաւատոյ, յաւերժ ցնծութիւն անձին, և յիշատակ հոգոյ։ Ի ՈԳ թուոյ, կազմեցի ձեռամբ իմով, յաշխարհս Այրարատեան, ի վանս Յովհաննու, ի դուրս սրբոյ Կարապետիս։ Աղաչեմ, որք ակտիք, յիշել աղաւթիւք և զենմամբ մարմնոյն Քի։

Գրիգոր վարդապետ որդի Տուտայ»[2]։

Այս հիշատակարանից երևում է, որ ձեռագրի ստացողը ինքն է եղել և իր ձեռքով էլ կազմել է այդ գիրքը։ Սանահնի վանքի մի

[1] Սանահնի «Քոթուկ», ձեռագիր Մատենադարանի, № 3031, էջ 53—55։ Այդ հատվածը կոչվում է «Վան սքանչելեաց սուրբ Աստուածածնին»։ Նույն հատվածը կա նաև Մատենադարանի № 8150 ձեռագրի մեջ։

[2] Այս հիշատակարանի նմանահանությունը տե՛ս հ. Ղ. վ. Ալիշան, «Այրարատ, բնաշխարհիկ Հայաստանեայց», Վենետիկ, 1890, էջ 167 և նույնի «Հայապատում», էջ 310։ Հմմտ. Գարեգին Ա. կաթողիկոս, Ցիշատակարանք ձեռագրաց, Ա., Անթիլիաս, 1951, էջ 365 և 366։ Բնագրում Գրիգոր վարդապետ որդի Տուտայ» գրված է մեծ մասամբ ծածկագիր։